

Նիկոլ Փաշինյան. «Ես շփվում եմ Ռուսաստանի Դաշնության նախագահի հետ, կառավարության ղեկավարի հետ: Եվ մեր աշխատանքային ժամերը փոխադարձ հարգանքն է: Եվ ես ընդհանրապես չեմ ընդունում այդ բառապաշարը, որովհետև դա ճիշտ բառապաշար չէ, պետական բառապաշար չէ: Չի կարելի վիրավորանքի, հեզանքի լեզվով խոսել այլ երկրների մասին, մանավանդ Ռուսաստանի Դաշնության նման երկրի մասին: Կարելի է ունենալ խնդիրներ, դրանց մասին պետք է խոսել, պետք է բարձրաձայնել, բայց նման բառապաշարով խոսել որևէ երկրի հետ, սխալ է: Եթե մենք այդ սխալները գործել ենք, մեր սխալները պետք է ինքներս ուղղենք, ոչ թե ուրիշների, այլ մեզ համար, որովհետև պետությունը մտածողության լրիվ ուրիշ հարթություն է: Եթե ուզում ենք ունենալ ուժեղ, անկախ, ինքնիշխան պետություն, պետք է մուտք գործենք մտածողության այդ հարթություն և ամրանանք այդ հարթությունում» (31.08.24թ.)

Չորեքշաբթի
11 սեպտեմբերի 2024թ.
№ 16 (625)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՏՐ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻԼԸ՝ 100 ԴՐԱՍ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Հայաստանի Հանրապետության 29.743 բառակրկի կմ տարածքը Կառավարության համար ընդհանրապես սակարկության ենթակա չէ, բայց մյուս կողմից երևանը խնդիր չի դնում ռազմական ճանապարհով վերականգնել ինքնիշխանությունն Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքների նկատմամբ: «...Մենք այսօր, վաղը կամ մյուս օրը ընդհանրապես խնդիր չենք դնում ռազմական ճանապարհով այդ տարածքների նկատմամբ մեր ինքնիշխանությունը վերականգնել: Ինչո՞ւ, որովհետև համարում ենք, որ այն պայմանավորվածությունները և այն սկզբունքները, որոնք արդեն որդեգրված են, հնարավորություն են տալիս, որպեսզի մենք խաղաղ, բանակցային եղանակով, այդ թվում՝ սահմանազատման գործընթացում բացառապես խաղաղ ճանապարհով, բանակցային ճանապարհով լուծենք»:

ԼԻԿՈՒ ՓՈՒՇԿԻՆԱՆ, 31.08.24թ.

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Straight Truth WWW.TEHRANTIMES.COM

TEHRAN TIMES

8 Pages | Price 100,000 Rials | 1.00 EURO | 4.00 AED | 46th year | No. 14858 | Saturday | September 7, 2024 | Shahrivar 17, 1403 | Rabia al-Awwal 3, 1446

Iran, Spain to expand cooperation in maritime transport services

TEHRAN - The Shipping Association of Iran has inked a memorandum of understanding (MOU) with the Advanced Training Course in Transport and Logistics in Barcelona, Spain, to enhance bilateral relations in the field of shipping lines.

Under the agreement, the two sides will cooperate in developing joint training programs, holding digital simulation courses, and providing specialized training content for operators working in the field of port and maritime transport services, IRNA reported.

Increasing the technical know-how, knowledge, and skills of manpower in the maritime transport and logistics sector has been cited as the main goal of this cooperation.

The memorandum of understanding was signed with the aim of taking advantage of the advanced platform of Port Virtual Lab (PVL) and improving the level of knowledge and practical skills in supply chain and international transportation. Page 4

Tehran summons UK envoy over new anti-Iran sanctions

What is Tehran's message to the various actors in the Caucasus and Central Asia?

Borderlines: Iran's Red Line

Իրանը վճռական պատասխան կտա «Չանգեզուրի միջանցքի» ցանկացած փոփոխության. իրական Սյունիքը ողջունում է ԻԻՀ դիրքորոշումը

Սեպտեմբերի 3-ին Իրանում ՌԴ դեսպանին կանչել են ԱԳՆ: Պատճառը վերջին շրջանում Մոսկվայի կողմից ցուցաբերվող աջակցությունն է «միջանցքի» նախագծին, որը պետք է Ադրբեջանը Հայաստանի տարածքով կապի Լախիջանի հետ:

Իրանը դեմ է այն երթուղուն, որը Հայաստանի տարածքով կկապի Ադրբեջանի հիմնական մասը Լախիջանի հետ: Այդ կապակցությամբ կայացել է Թեհրանում ՌԴ դեսպանի և Իրանի ԱԳՆ Եվրասիական հարցերով գլխավոր տնօրինության ղեկավար Մուշթաֆա Դեմիրչուկի հանդիպումը: Տեղեկությունը տարածել է Իրանի ԱԳՆ-ն: Թեհրանում Ռուսաստանի դեսպանի հետ Դեմիրչուկի հանդիպմանը բարձրացվել է կայուն խաղաղության երաշխավոր և տարածաշրջանում խաղաղության հիմք հանդիսացող երկրների ազգային ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և փոխադարձ շահերի հարգման հարցը:

Դեմիրչուկն Նշել է, որ Իրանն աջակցում է տարածաշրջանում խաղաղության և կայունության վերականգնմանը, տարածաշրջանի երկրների համագործակցության զարգացմանը և դեմ է աշխարհաբաղախության և միջազգային մակարդակով ճանաչված տարածաշրջանի սահմանների փոփոխմանը:

Սեպտեմբերի 4-ին Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի հյուպատոսարանում գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Կարամին հանդիպում է ունեցել «Սյունյաց երկիր» պարբերականի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ:

Վերջինիս հետաքրքրել է Նոր իրավիճակում այսպես կոչված Չանգեզուրի միջանցքի հարցում Իրանի դիրքորոշումը: Եվ դա այն բանից հետո, երբ օրերս հայտնի դարձավ Ռուսաստանի պատրաստակամությունը՝ աջակցելու «Չանգեզուրի միջանցքի» գաղափարի իրականացմանը, որը, ըստ Ադրբեջանի և Թուրքիայի ծրագրերի, ՀՀ Սյունիքի մարզով Ադրբեջանի արևմտյան շրջանները կապելու է Լախիջանի հետ:

Մորթեզա Աբեդին Կարամին հիշեցրեց Իրանի գերագույն հոգևոր առաջնորդ Ալի Խամենեի՝ Թեհրանում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ արած հայտարարությունն առ այն, որ «Չանգեզուրի միջանցքը» վտանգավոր է Հայաստանի համար:

Շարունակությունը՝ էջ 2

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության բանաձևը

Սույն թվականի սեպտեմբերի 2-ին Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը, որի անդամ է նաև «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը, ընդունեց Արցախի վերաբերյալ բանաձև: Ստորև ներկայացնում ենք բանաձևի ոչ պաշտոնական թարգմանությունը հայերեն լեզվով:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության բանաձևը

- Ճանաչելով Լեռնային Ղարաբաղի խաղաղ հայ բնակիչների սպանությունները և այլ բռնությունները՝ ներառյալ խռովումները,
- Ճանաչելով Լեռնային Ղարաբաղի բազմաթիվ առաջնորդների կալանավորումը,
- Ճանաչելով 2023 թվականի սեպտեմբերին զանգվածային բռնությունների սպառնալիքի ներքո Լեռնային Ղարաբաղից 100 000 հայ բնակիչների փոխումը,

- Ճանաչելով հակահայկական ատելության խոսքի և ցեղասպանական մտադրությունների պատմությունը, որն Ադրբեջանի լրատվամիջոցները, բաղադրական, ռազմական և կրոնական ղեկավարներն են տարածել,
- Ընդունելով, որ Ադրբեջանը կալանավորել է հայ զինվորականներին և խաղաղ բնակիչներին, որոնցից ոմանց գտնվելու վայրերը դեռ անհայտ են,
- Ճանաչելով, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղում ոչնչացրել է հայկական մշակութային ժառանգությունը,
- Ընդունելով 1988-1992 թվականներին Լեռնային Ղարաբաղի հանրաքվեի՝ միաժամուրկ Հայաստանի Հանրապետությանը կամ անկախ պետություն դառնալու նպատակով, որոնք երբեք միջազգային ճանաչված չեն:

Շարունակությունը՝ էջ 4

Կանոնակարգ

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի որոշում

Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման և սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովն ու Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովը ստեղծվել են Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման իրականացնելու նպատակով:

Նշելով, որ Հանձնաժողովները կհիմնվեն Ալմա-Աթայի 1991 թվականի հռչակագրի վրա՝ որպես Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև պետական սահմանի սահմանազատման գործընթացի հիմնարար սկզբունք (եթե հետագայում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրով կնախատեսվեն այլ կարգավորումներ, ապա տվյալ հիմնարար սկզբունքը կհամապատասխանեցվի վերը նշված համաձայնագրով սահմանված սկզբունքներին):

Պայմանավորվեցին հետևյալի մասին.

- ՀՈՂԱՍԾ 1
- Սույն Կանոնակարգով կարգավորվում է Հանձնաժողովների համատեղ գործունեությունը: Հանձնաժողովների նիստերի և համատեղ աշխատանքային հանդիպումների կազմակերպման և անցկացման կարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության Կառավարությունների կողմից հաստատված Աշխատակարգով:
 - Ելելով անհրաժեշտությունից՝ Հանձնաժողովներն իրենց աշխատանքներում ներգրավում են փորձագետների և մասնագետների:

- ՀՈՂԱՍԾ 2
- Սահմանազատման գործընթացում Հանձնաժողովներն օգտագործում են բոլոր վերաբերելի բարոնեգազրական փաստաթղթերը, ինչպես նաև բոլոր նորմատիվ իրավական ակտերը:

Շարունակությունը՝ էջ 4

Սամվել Ալեքսանյանի Ելույթը Կապանի գիտագործնական կոնֆերանսում

■ (29.08.24թ.)



Հարգելի բարեկամներ
Ուրախ եմ ձեզ տեսնել Սյունիքի մարզկենտրոնում, բարով եք եկել...

Մեր լրատվամիջոցի խմբագրակազմը կարևորում է այս ֆորումը, ուստի և պատասխանատվությամբ եմ վերաբերվում խոսքիս, որը կհնչեցնեմ այստեղ: Այդ իսկ պատճառով գերադասում եմ ելույթ ունենալ հայերեն լեզվով, որպեսզի մտքերս առավել պարզ և հստակ արտահայտեմ, որպեսզի երկրամաստության տեղիք չտամ:

Նախ՝ շնորհակալություն ձեզ և այս գիտագործնական կոնֆերանսի կազմակերպիչներին:

Միջոցառումը Կապանում անցկացնելու փաստը հավելյալ վկայություն է այն ուշադրության և հետաքրքրվածության, որ կա ձեզ մոտ՝ Սյունիքի տարածաշրջանի և սյունեցիների մտահոգությունների հանդեպ:

Այս կոնֆերանսը, մեր ընկալմամբ, բարեկամների հանդիպում է, իսկ բարեկամները պարտավոր են գրուցել անկեղծորեն, իրար աչքերի մեջ նայելով: Այդ սկզբունքով էլ կփորձեմ կառուցել խոսքս:

* * *

Պահի լրջությունը ճիշտ հասկանալու համար նպատակահարմար եմ գտնում սկզբից ներայացնել Սյունիքի վիճակը, որում հայտնվել են վերջին տարիների պատերազմական գործողությունների և ընդհանրապես ռազմաբաղաճակների արտադրությունը:

Մեր տարածաշրջանի աշխարհագրությանը և պատմությանը շատ թե քիչ ծանոթ յուրաքանչյուր ոք տեղյակ է, որ Արցախի ու Սյունիքը դարձել են ամբողջություն են կազմել, նաև ժողովրդագրական իմաստով, ինչպես և անվտանգային համակարգի տեսակետից: Եվ Արցախի վերականգնության հետո Սյունիքը հայտնվել է միանգամայն նոր կարգավիճակում՝ մի քանի առումով:

Այսպես՝ այնքան չկա այն Սյունիքը, որ ունեցել ենք 2020 թ. պատերազմից առաջ և նույնիսկ պատերազմից հետո, անգամ 2022 թվականին:

Սյունիքի մարզը պատերազմից առաջ ունեցել է (ըստ պաշտոնական տեղեկությունների) 4506 բնակ. կմ տարածք: Իսկ որքա՞ն է Սյունիքի տարածքն այսօր. այդ մասին ստույգ տեղեկություն ունենալու չի կարող տալ:

Սահմանամերձ բնակավայրերի մի մասում նույնիսկ հստակություն չկա, թե կոնկրետ որտեղով է անցնում հանրապետության պետական սահմանը:

Ասում են՝ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո հայ-ադրբեջանական պատերազմն ավարտվել է: Իրականում, սակայն, առկա էին Սյունիքի առումով, այդպես էլ:

Նախ՝ նոյեմբերի 9-ից օրեր անց Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև ստորագրվեց մի հուշագիր, որի համաձայն 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայ-ադրբեջանական սահմանի արևելյան հատվածի մեր մարտական դիրքերը, նաև Գորիս-Կապան ու Կապան-ճակատն միջպետական ճանապարհները հանձնվեցին Ադրբեջանին: Այդ փաստաթղթով կիսվեց նաև երբևէ Ադրբեջանի մաս չկազմած Շուռնուխ գյուղը:

Հարուստությունը՝ էջ 5



Գիտագործնական կոնֆերանս Կապանում՝ «Լրատվամիջոցների գործունեության առանձնահատկությունները ՀՀ Սյունիքի մարզում»

Կապանում Ռուսական գրքի տանը (Ս. Պապյան-18) օգոստոսի 29-ին տեղի ունեցավ գիտագործնական կոնֆերանս՝ «Սյունիքի մարզում լրատվամիջոցների գործունեության առանձնահատկությունները» թեմայով, որին մասնակցում էին երևանում գործող «Մեդիա» դպրոցի շրջանավարտներ, ՌԴ արտագործնակարարության՝ Կապանում բացվելիք հյուպատոսության առաջատար խմբի ներկայացուցիչներ, Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսության դիվանագետներ, մարզկենտրոնի լրագրողներ:

Ներածական խոսքով համաժողովը բացեց Ռուսաստանի արտագործնակարարության՝ Կապանում հյուպատոսությունը բացելու

առաջատար խմբի ղեկավար Սերգեյ Չաչչի-խինը: Ներկաներին ողջերթի խոսքեր հնչեցրին «Россотрудничество» կազմակերպության Հայաստանի ներկայացուցչության ղեկավարի տեղակալ Եկատերինա Անդրեևան, «Ռոսիյան-ՆԵ» ՀԿ նախագահ Կյուրմիլա Ախախանյանը:

Ընդարձակ զեկուցումով հանդես եկավ «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, ով անդրադարձ կատարեց մերոյա իրողություններին՝ հայ-ռուսական ոչ այնքան հարթ դիվանագիտական հարաբերությունների լույսի ներքո: Բանախոսը ներկայացրեց Սյունիքի վիճակը, որում հայտնվել ենք 44-օրյա պատերազմից և ընդհանրապես վերջին ռազմաբաղաճակների գարգացումներից հետո:

Իրանը վճռական պատասխան կտա «Չանգեզուրի միջանցքի» ցանկացած փոփոխության. իրական Սյունիքը ողջունում է ԻԻՀ դիրքորոշումը

Սկիզբը՝ էջ 1

Գլխավոր հյուպատոսը նշեց նաև, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը դեմ է այն «միջանցքի» նախագծին, որը պետք է Ադրբեջանը Սյունիքի տարածքով կապի Նախիջևանի հետ:

Իրանի համար եղել է մտում է անընդունելի՝ միջազգային մակարդակով ճանաչված տարածաշրջանի սահմանների որևէ փոփոխություն: Ասել է թե՛ Իրանը չի կիսում «Չանգեզուրի միջանցքի» վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը:

«Չանգեզուրի միջանցքին» առնչվող Իրանի վերապահումն անմիջակերպ կապված է Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային շահերի և այդ երկրի ազգային անվտանգության ուղղված մարտահրավերների հետ, ինչը համապատասխանում է Սյունիքի անվտանգության շահերին:

Սամվել Ալեքսանյանը հետաքրքրվեց նաև Իրանի կողմից առաջ տարվող «Արաբսի միջանցք» գաղափարով և մասնավորապես Արաբս գետի աջ ափով ձգվող ավտոմայրուղու վերականգնման ընթացքով, որով (հետխորհրդային տարիներին) Ադրբեջանի արևմտյան շրջանները հաղորդակցվում են Նախիջևանի հետ:

Ի դեպ, այդ ճանապարհի առկայությունն արհեստական ու անխմատ է դարձնում Սյունիքի տարածքով Ադրբեջանի երկու հատվածը միմյանց կապելու թուրք-ադրբեջանական ծրագիրը:

* * *

Հարևանների տարածքային ամբողջականության ուղղված ցանկացած սպառնալիք կամ սահմանների վերագծում կարմիր գիծ է Իրանի համար, հայտարարել է արտագործնակարար Աբբաս Արադջին:

«Տարածաշրջանային խաղաղությունը, անվտանգությունը և կայունությունը ոչ թե

սուկ նախապատվություն են, այլ մեր ազգային անվտանգության հիմնասյունը: Հյուսիսից, հարավից, արևելքից կամ արևմուտքից մեր հարևանների տարածքային ամբողջականությանն ուղղված ցանկացած սպառնալիք կամ սահմանների վերագծում բացարձակապես անընդունելի է և կարմիր գիծ է Իրանի համար», – գրել է Իրանի արտաքին բաղաձայնագրերն աշխարհային ղեկավարը X-ում (06.09.24 թ.):

* * *

Բաբվի պահանջած միջանցքի հարցով Լավրովի հայտարարությունը շատերին է անակնկալի բերել, ինչպես՝ և Մոսկվան անտեսել այդ հարցով Թեհրանի դիրքորոշումը. Tehran Times-ն է այս մասին գրում հրապարակած ծավալուն հոդվածում:

Իրանի անվտանգության կառույցներին մոտ կանգնած լրատվամիջոցը հստակեցնում է Թեհրանի սահմանած կարմիր գիծն Անկարայի և Բաբվի պահանջած «Չանգեզուրյան միջանցքի» հարցում:

«Թուրք և ադրբեջանցի պաշտոնյաները պահանջում են մի ճանապարհ, որն անցնում է Հայաստանի պատմական Սյունիքի տարածքով, որը դարձրել է շարունակ սահմանակից է եղել Իրանին», – ընդգծում է Իրանի կառավարության կողմից վերահսկվող լրատվամիջոցը՝ մեջբերելով իրանցի պաշտոնյաների վերջին օրերի կոշտ հայտարարությունները:

«Իրանը դեմ է ցանկացած միջանցքի, որը կխախտի Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը, և ոմանց երազանքներն այդ մասին երբեք իրականություն չեն դառնա», – գրուցարել է Հայաստանում Իրանի դեսպան Մեդի Սոբհանին:

Tehran Times-ն ակնարկում է, որ Իրանի իշխանությունները պատրաստ են ընդդիմա-

Մարգային հեռուստատեսային աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ նկատառումներ հայտնեց «Չանգեզուրի պոնդամոլիթերային կոմիտատ ՓԲ» ընկերության լրատվության և հասարակաշխարհային բաժնի պետ Արայիկ Մարգարյանը:

«Մեդիա» դպրոցի հիմնադիր Հայկ Դերմանյանը անդրադարձավ Հայաստան-Ռուսաստան-Իրան կոնցեպտին, Նշելով, որ այդ երկրները կանգնած են լուրջ մարտահրավերների առաջ և որոնց լուծումը կայանում է նաև մեդիագրագիտության, տեղեկատվական անվտանգության աշխատանքը ճիշտ կազմակերպելու մեջ, այն է՝ որ դաշտում պիտի համագործակցեք, ինչ ընդհանուր արժեքներ և մարտահրավերներ ունենք և ինչի դեմ պիտի պայքարենք:

Քաղաքագետ-լրագրող Գեղեցիկ Մանուկյանի զեկուցումը վերաբերում էր ժամանակակից գործերում վարձկանների և ահաբեկիչների ֆեյսբուքին ու մամուլում այդ երևույթի լուսաբանմանը, որն ավելի հրատապ է դարձել մերոյա պատերազմական իրադարձությունների համատեքստում: Խնդիրն առավել մտահոգող է դարձել Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, երբ Թուրքիա-Ադրբեջան տանդեմը տարածաշրջանում վարձկաններ ու ահաբեկիչներ էր «ներմուծել» մերձավոր արևելքի երկրներից, ինչը միջազգային իրավունքի կոպտագույն խախտում էր և դատապարտման չարժանացավ միջազգային հանրության կողմից: Եվ քանի որ համաշխարհային հանրության կողմից պատշաճ գնահատանքի չարժանացավ և չդատապարտվեց, այդ հիմնասխալը լայն տարածում գտավ ռուս-ուկրաինական իրադարձություններում:

Համաժողովի ժամանակ հնչեցին այլ զեկուցումներ ևս: Ամփոփելով համաժողովը՝ Սերգեյ Չաչչիխինն ընդգծեց այն միտքը, որ տեղական լրատվամիջոցներն ավելի հստակ են պատկերացնում մարզում կատարվող իրադարձությունները և համաժողովում հնչեցված զեկուցումները գնահատեց չափազանց արդիական:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Նալու սահմանները փոխելու փորձերին ընդհուպ ռազմական միջամտությամբ:

Լավրովի այդ դիտողություններն իրանցի բարձրաստիճան և ազդեցիկ գործիչների քննադատությունն են հարուցել, գրում է լրատվամիջոցը՝ մեջբերելով Հեղափոխության պահապանների կորպուսի նախկին ղեկավար, ներկայումս՝ Նպատակահարմարության խորհրդի քարտուղար Մոհսեն Ռեզայեի հայտարարությունը. «Ռուսաստանյան պետական գործի պահպանման անընդունելի է և ակնհայտորեն հակասում է Իրանի հետ բարեկամության մասին իր հայտարարությանը: Այս երկրամաստությանը պետք է վերջ տրվի»:

Լրատվամիջոցը որպես ռուսաստանյան դիվանագիտության ղեկավարի պնդմանը արձագանք է ներկայացնում նաև Հայաստանում Իրանի դեսպանի հայտարարությունը, թե «ոմանց երազանքներն այդ մասին երբեք իրականություն չեն դառնա»:

Tehran Times-ը հավելում է, որ Բաբվի և Անկարայի պահանջին Ռուսաստանի արտագործնակարարի հրապարակային աջակցությունը գարմագրել է շատերին, ովքեր «չէին սպասում, թե Ռուսաստանը կանտեսի Իրանի դիրքորոշումը մի հարցում, որը բազմիցս բնորոշել է որպես «կարմիր գիծ»:

«Չորս տարի Ռուսաստանը երկրամաստություն էր պահպանում Ադրբեջանի առաջարկած միջանցքի հարցում: Սակայն Ռուսաստանը հայտնվել է անորոշ վիճակում և այժմ փորձում է մեղմել Ադրբեջանին, թեքնա աջակցելով այդ միջանցքային ծրագրին, որը կարող է դեպի Եվրոպա էներգիայի արտահանման կենսական կարևորության երրորդ դառնալ», – հարավկովկասյան հարցով փորձագետ Սալար Սեյֆոդինի գնահատականն է մեջբերում Իրանի կառավարությանը մոտ կանգնած թերթը:

Իրանցի քաղաքագետը գզուցնում է՝ «Չանգեզուրի միջանցքը» կարող է նաև Ադրբեջանի մերձավոր դաշնակից Իսրայելին ռազմավարական առավելություն տալ՝ հնարավորություն ընձեռելով «շրջափակել» Իրանը և օգտագործել երկրի սահմանների խոցելիությունը:



Հարցազրույց «ՉՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական ղեկարտամենտի ղեկավար Չարա Սիանոզյանի հետ

Հայաստանի Հանրապետության թիվ 1 հարկատու, Սյունիքի մարզի խոշորագույն գործատու Չանգեզուրի պղնձամոլիբդենային գործունեությունը, բնականաբար, հանրության ուշադրության կենտրոնում է։

Հետաքրքրական է նաև ընկերության ղեկավարների գործունեությունը, որին ժամանակ առ ժամանակ անդրադառնում ենք։ Այդ շարքում մեր հերթական հանդիպումը «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական ղեկարտամենտի ղեկավար Չարա Սիանոզյանի հետ է։

Հարգելի Չարա Անոնի, առաջին անգամ եք ներկայանում մեր լսարանին, ուստիև ողջամիտ կլինեք, որ ընթերցողը նախևառաջ ծանոթանա Զեր կենսագրությանը կամ անցած ճանապարհին։

– ՉՊՄԿ-ն երրորդ հանբարոյունաբերական ձեռնարկությունն է, որտեղ աշխատում եմ։ Առաջինը «Ֆորչև ռիզորսիս» չինական կազմակերպությունն էր, որն ուսումնասիրում էր Հրազդանի, Աբովյանի, Սվարանցի հանքավայրերը։ Այդ նախագիծը հետագայում փակվեց։

Ապա աշխատել եմ «Լիդիան Արմենիա»-ում, որի պատմությանը հանրությունը ծանոթ է։ 2018-ին այն փակվեց ու մինչև հիմա դեռ չի բացվել։ Այդ ընկերությունում անձնակազմի հավաքագրման բաժնի ղեկավարն էի։

Երեք բարձրագույն ուսումնական հաստատություն եմ ավարտել։ Առաջինը Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան է, որտեղ «Արդյունաբերական դիզայն» մաս-



նագիտություն եմ ձեռք բերել։ Երկրորդ և երրորդ մասնագիտությունս լոգիստիկան է, մեկը սովորել եմ Մոսկվայում, մյուսը՝ Ամերիկայում։

Որպես գլխավոր HR (մարդկային ռեսուրսների կառավարիչ) աշխատել եմ «Արոչի-բանկում», այնուհետև եղել եմ Հայաստանի ավտոմեքենաների գրեթե ամենամեծ դիլերների HR-ը։ Շատ գոհ եմ, որ ունեմ լոգիստիկ կրթություն, բանզի ամբողջ լոգիստիկան հենված է մարդկային ռեսուրսների վրա։

2023 թ. հունվարից «Չանգեզուրի ՊՄԿ»

ՓԲ ընկերության վարչական ղեկարտամենտի ղեկավարն եմ։

– Ի՞նչ գործառնություններ է իրականացնում վարչական ղեկարտամենտը Չանգեզուրի պղնձամոլիբդենայինում։

– Վարչական ղեկարտամենտի ամենամեծ գործառնությունը մարդկային ռեսուրսների կառավարումն է։

Այդ ոլորտը կառավարող օղակը նախկինում կոչվում էր կարդերի բաժին, իմ գալուց հետո փոփոխություն կատարեցինք, և հիմա

կոչվում է մարդկային ռեսուրսների կառավարման բաժին։ Այդպես ճիշտ է կառավարման տեսանկյունից և համահունչ է միջազգային փորձին։ Մենք առանձնացրել ենք աշխատակիցների ռոտացիայի և նոր ընդունվող կարդերով համալրման ստորաբաժանումը, աշխատավարձի հաշվարկման բաժինը։

Մի խոսքով՝ ունենք անալիտիկներ, կարդերի հաշվառման բյուրո, անձնակազմի համալրման և ռոտացիայի բաժին, ինչպես և (իմ գալուց հետո) Ուսումնական կենտրոն։

Մենք արմատապես փոխեցինք և՛ Ուսումնական կենտրոնի գործունեությունը, և՛ աշխատակիցների ատեստավորման ձևը։

Մտա ամսուկես առաջ ավարտեցինք մի ուշադրակ ծրագիր՝ Քաջարանի երիտասարդների մի խմբի սովորեցրինք եռակցողի, էլեկտրիկի, փականագործի մասնագիտություններ։

Ցավոք, այդ ժամանակ մեր ընկերությունում նրանց աշխատանքի վերցնելու հնարավորություն չունեինք։ Ու ներգրավեցինք նաև Սյունիքի մարզում աշխատող մեր գործընկեր կազմակերպություններում «Մարիա»-ում, «Աժդանակ»-ում...

Ի դեպ, այդ երիտասարդների ուսուցման ընթացքում շատ լուրջ մոնիթորինգ ենք իրականացրել և հետևել, որ հանկարծ բացակայություններ չլինեն, որ որևէ մեկին հենց այնպես գնահատական չդրվի։ Գրեթե ամեն օր այնտեղ էինք և հետևում էինք դասընթացներիին։ Եղել է դեպք, երբ երկու օր դասընթացներին չմասնակցած երիտասարդը դուրս է մնացել ծրագրից։ Եվ այդ մոտեցումը հնարավորություն տվեց, որ որակյալ, հմուտ մասնագետներ պատրաստենք։

Չմոռանամ ասել՝ Վարչական ղեկարտամենտի ղեկավարման ներքե են գտնվում ՉՊՄԿ-ի հյուրընկալները, ճաշարանը՝ մոտ 4600 հոգու կերակրող, արտարական էսթետիկայի բաժինը, մարզահամալիրը, Մշակույթի կենտրոնը, մանկապարտեզները։

– Ուսումնական կենտրոնի գործունեությունն իսկապես ուշադրակ է։ Շատ պահանջված մասնագիտություններով կարդեր եք պատրաստում։ Բայց արդ...

Շարա Սիանոզյանը՝ էջ 8

Սալար Սեյֆոդինը համոզված է՝ իրանցիները կդիմարդեն «Չանգեզուրի միջանցքին», նույնիսկ եթե ռազմական միջամտության կարիք չլինի (07.09.24թ.)։

* * *

Իրանի խորհրդարանի ազգային անվտանգության և արտաքին բաղաբանականության հանձնաժողովի նախագահ Էթրահիմ Ագիզի հայտնել է, որ իսլամական հանրապետությունը «Չանգեզուրի միջանցքը» դիտարկում է որպես կարմիր գիծ եւ վճռական պատասխան կտա դրա ցանկացած փոփոխության», տեղեկացրել է Mehr-ը։

Այս առնչությամբ նա մեկնաբանել է Ռուսաստանի վերջերս հայտնած դիրքորոշումը ՌԴ և Ադրբեջանի նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Իլհամ Ալիևի հանդիպման ժամանակ՝ այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» մասին։

«Ավհիայտ է, որ Չանգեզուրի միջանցքում իրադարձությունների աշխարհաբաղաբանական զարգացման հետ կապված հարցերը չեն համապատասխանում տարածաշրջանի երկրների շահերին, եւ Իրանը կորականացուցանում է այդ հարցին», – ասել է Ագիզին։

Մեկնաբանելով մի շարք պետությունների անհետեթ մտքերը «Turan» նախագծի վերաբերյալ՝ իրանցի բարձրաստիճան օրենսդիրը հայտնել է, որ, ըստ էության, «Չանգեզուրի միջանցքը» կեղծ միջանցք է, եւ, ըստ երեւոյթին, կան ինչ-որ նախագծեր Իրանի ռազմական եւ բաղաբանական հզորությունը տարածաշրջանում թուլացնելու համար՝ այդ միջանցքի պատրվակի տակ։

«Մենք նախագծուշացնում ենք նրանց, ովքեր նման պատրանքներ ունեն, որ այդ որոշումների հետեւանքները կլինեն ծանր եւ թանկ կնստեն նրանց վրա։ Իրանի Իսլամական Հանրապետությունը, ղեկավարվելով առողջ բանականությամբ, երբեք չի ձգտում ստեղծել լարվածություն տարածաշրջանում», – ասել է Ագիզին՝ ավելացնելով, որ, մյուս կողմից, երկիրը կպաշտպանի իրեն, եթե իր տարաբնույթի ամբողջականության սպառնալիք ծագի։

Ասելով, որ Իրանն ուշադիր հետեւում է Հարավային Կովկասում իրադարձությունների զարգացմանը, նա ընդգծել է. **«Մենք բանիցս**

տարբեր միջոցներով հայտնել ենք տարածաշրջանի երկրներին, որ այդ միջանցքը համարվում է կարմիր գիծ Իրանի համար, եւ ցանկացած փոփոխություն դրանում կհանդիպի լուրջ և վճռական պատասխանի Իրանի կողմից» (07.09.24թ.)։

* * *

Բաբվում Իրանի նախկին դեսպանը, ընդգծելով «Չանգեզուրի միջանցքի» հարցում Մոսկվայի և Բաբվի դիրքորոշման հստակեցման անհրաժեշտությունը, ասել է, որ արևմտյան լրատվամիջոցներն օգտագործում են այդ հարցը Ռուսաստանի և Ադրբեջանի հետ Իրանի հարաբերությունները խաթարելու համար։

Mehr լրատվական գործակալությանը տված հարցազրույցում իրանցի բաղաբանական փորձագետ և նախկին դիվանագետ Մոհսեն Փաքային անդրադարձել է այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» վերաբերյալ ռուսաստանցի պաշտոնյաների վերջին հայտարարություններին։ **«Դեռեք է հստակեցվի Ռուսաստանի դիրքորոշումը Պուտինի Ադրբեջան այցից հետո»**, – ասել է նա՝ հավելելով, որ այժմ կարծիք կա «Պուտինի մեկնաբանություններից հետո «Չանգեզուրի միջանցքը» կբացվի, և Իրանի սահմանը անմիջապես կփոխվի, և երկիրը կկանգնի Ռուսաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում առաջացող խնդրների առաջ։

«Թեւ Ադրբեջանն ու Ռուսաստանը մեր բարեկամներն են, սակայն նախ և առաջ մենք պետք է ուշադիր ուսումնասիրենք իրավիճակը և բանակցությունների մեջ մտնենք Մոսկվայի և Բաբվի հետ՝ անորոշությունները վերացնելու համար, որպեսզի հասկանաք նրանց մտադրությունները և բացասական վարքագիծ չդրսևորենք, բանի դեռ հարցը չի պարզվել», – ասել է նա։

Ադրբեջանում Իրանի նախկին դեսպանը հայտարարել է, որ «Չանգեզուրի միջանցքի» բացումը կարող է տեղի ունենալ մի քանի ուղով։

Նրա կարծիքով, Ռուսաստանի և Ադրբեջանի ռազմական գործողությունները կարող են լինել միջանցքի բացման ուղիներից մեկը, ինչը կհանգեցնի Հայաստանի տարածքային ամբողջականության խախտմանը, և այս դեպքում կխախտվեն նաև Իրանի և Հայաս-

տանի միջազգային սահմանները։

«Եթե նման իրադարձություն տեղի ունենա, ապա արևմտյան երկրներն անպայման կօգնեն Հայաստանին, և տարածաշրջանում նոր պատերազմ կսկսվի, ուստի չեն կարծում, որ Ռուսաստանն ու Ադրբեջանը ցանկանում են, որ տարածաշրջանում նոր պատերազմ լինի, բանի որ Ադրբեջանն ու Հայաստանը վերջերս ավարտեցին Ղարաբաղյան պատերազմը և խաղաղության պայմանագիր են ստորագրում, և երկու կողմերն էլ հայտարարել են, որ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, ուստի «Չանգեզուրի միջանցքի» ռազմական ճանապարհով բացումը բացառվում է», – ասել է նա։

Բաբվում Իրանի նախկին դեսպանը կարծում է, որ երկրորդ ուղին կարող են լինել Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղ բանակցությունները, որոնց միջոցով Հայաստանի ազգային ինքնիշխանության շրջանակներում Ադրբեջանը կարող է մուտք ունենալ նախիջևան։

Փաքայինը նաև հայտարարել է, որ եթե նման համաձայնություն ձեռք բերվի, ապա Հայաստանը որոշակի պահանջներ կունենա, օրինակ՝ ակնկալել, որ Ադրբեջանը թույլ կտա իր տարածքով Իրանի հասնել։ Բացի այդ, եթե Թուրքիան ցանկանա անցնել այդ երթուղով, ապա պետք է թույլ տա Հայաստանին՝ հյուսիսային սահմաններից հասնել Սև ծովին, հավելել է նա։

«Այս նպատակներից հասնելը երկարատև բանակցություններ է պահանջում, բանի որ Ադրբեջանն ու Թուրքիան շահագրգռված չեն Հայաստանին նոր երթուղիներ տրամադրելու հարցում։ Եթե այս հարցը լուծվի բանակցությունների միջոցով, ապա դա կարող է տևել մի քանի տարի, ինչի պատճառով էլ Ադրբեջանն ու Հայաստանը պայմանավորվել են չնչել դա խաղաղության համաձայնագրում», – ասել է նա։

Այսպիսով, Ռուսաստանի հայտարարությունը պետք է կշռադատվի բոլոր կողմերից՝ նախքան որևէ դիրքորոշում ընդունելը, բանի որ այս միջանցքը բացելու համար շատ խոչընդոտներ կան, ուստի երկրների դիվանագետները պետք է բանակցեն Մոսկվայի հետ այս

հարցում, շարունակել է նա։

«Թերևս, արևմտյան ՉԼՄ-ները շահարկել են Չանգեզուրի հարցը և ձգտում են խաթարել մեր հարաբերությունները Ռուսաստանի և Ադրբեջանի հետ», – հավելել է Իրանի նախկին դեսպանը (08.09.24 թ.)։

* * *

Իրանի և Հայաստանի միջև ուղիղ սահմանային կապը մի քանի հազար տարվա պատմություն ունի, և բոլոր երկրները, այդ թվում՝ Ռուսաստանի կառավարությունը, պետք է հարգեն դա։ Այս մասին հայտարարել է Իրանի խորհրդարանի Ազգային անվտանգության հանձնաժողովի անդամ Հասան Քաշբավին՝ Mehr գործակալության հետ զրույցում անդրադառնալով Սյունիքի մարզով այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» բացմանը և այդ առումով Ադրբեջանի և Թուրքիայի հետ համագործակցելու վերաբերյալ ռուս պաշտոնյաների հայտարարություններին։

Այս համատեքստում նա հիշեցրել է, որ Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդն ընդգծել էր, որ սահմանները երբեք չպետք է փոխվեն, չպետք է լինի նվազագույն հարձակում տարածաշրջանի պատմական ու ավելի բան հազարամյա սահմանների վրա։

Քաշբավին ընդգծել է, որ տարածաշրջանում անվտանգությունն ու խաղաղությունը պահանջում են կայունություն և ոչ մի փոփոխություն սահմաններում։

«Հայաստանի միջև ուղիղ սահմանային կապը մի քանի հազար տարվա պատմություն ունի, և բոլոր երկրները, այդ թվում՝ Ռուսաստանի կառավարությունը, պետք է հարգեն դա։ Մենք բոլորս պետք է ուշադրություն դարձնենք երկրների տարածքային ամբողջականության պահպանմանը և միջազգային սահմանների ճանաչմանը... Եվ ներկայումս մեզ համար շատ գարանային է Ռուսաստանի նման երկրի դիրքորոշումը «Չանգեզուրի միջանցքի» հարցում։ Ամեն դեպքում, մենք հույս ունենք, որ Ռուսաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, Հայաստանը և բոլոր երկրները կփորձեն արդյունավետ գործողություններ ձեռնարկել տարածքային ամբողջականության և անկախության հարգման և միջազգային սահմանների ճանաչման շրջանակում», – ասել է նա (09.09.24թ.)։

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության բանաձևը

Սկիզբը՝ էջ 1

- ճանաչում չեն ստացել,
- Ընդունելով, որ Ադրբեջանը 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023 թվականի սեպտեմբեր արգելափակել էր Լաչինի միջանցքը՝ կանխելով սննդի, վառելիքի և դեղորայքի մատակարարումը Լեռնային Ղարաբաղի բնակիչներին՝ ստեղծելով հումանիտար ճգնաժամ, որը հանգեցրել է թերսնման, սովից մահվան և հոգեբանական վնասի,
- Յիշեցնելով 2023 թվականի փետրվարի 6-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը, որն Ադրբեջանին պարտավորեցնում էր վերացնել Լաչինի միջանցքի արգելափակումը,
- Յիշեցնելով նաև 2023 թվականի նոյեմբերին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը, որը պարտադրում էր Ադրբեջանին ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակիչների անվտանգ վերադարձը,
- Ճանաչելով Ադրբեջանի կողմից Արդարադատության միջազգային դատարանի՝ 2023 թ. փետրվարի և նոյեմբերի որոշումները չկատարելը,
- Ճանաչելով, որ Ադրբեջանը 2023 թվականի սեպտեմբերի 19-20-ին ռմբակոծել է Լեռնային Ղարաբաղը՝ 200-ից ավելի

- զոհերի և 100 000 հայերի հարկադիր տեղահանման ելքով,
- Ընդունելով միջազգային մտահոգությունները Ադրբեջանի կողմից Յայաստան հնարավոր ներխուժման վերաբերյալ,
- Ընդունելով միջազգային իրավաբանների, ՄԱԿ-ի ներկա և նախկին պաշտոնյաների, այլ կազմակերպությունների ու գիտնականների կարծիքները՝ ցեղասպանության վտանգի և Լեռնային Ղարաբաղի արգելափակումը որպես ցեղասպանություն որակելու վերաբերյալ,
- Ճանաչելով, որ Ադրբեջանը 1948 թ. ՄԱԿ-ի ցեղասպանության մասին կոնվենցիայի անդամ է,
- Ճանաչելով, որ Ադրբեջանը 1949 թ. ժնկյան չորս կոնվենցիաների, 1954թ. Յազազայի մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի և 2006թ. Բռնի անհետացումների դեմ բոլոր անձանց պաշտպանության կոնվենցիայի անդամ է,
- Ճանաչելով, որ Ադրբեջանը Խոշտանգումների դեմ 1984 թ. կոնվենցիայի, ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման 1965թ. կոնվենցիայի, ինչպես նաև մի շարք այլ միջազգային մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի անդամ է,

- Ճանաչելով, որ Յայաստանը 2024 թվականի փետրվարի 1-ին վավերացրել է Զոնմի ստատուտը՝ ընդունելով Միջազգային քրեական դատարանի իրավասությունը:
- Չեղարկվող Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը՝**
- Յայտարարում է, որ 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023 թվականի սեպտեմբեր Լեռնային Ղարաբաղի արգելափակումը, այդ թվում՝ Լաչինի միջանցքի փակումը, որակվում է որպես կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որոնք հանգեցնելու են էթնիկ հայերի ֆիզիկական ոչնչացմանը կամ տեղի հայերին ֆիզիկական վնաս պատճառելուն, որոնք ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայով համարվում են ցեղասպանական գործողություններ:
 - Յայտարարում է, որ 2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին էթնիկ հայերի հարկադիր տեղահանումը արգելափակման և ռմբակոծման միջոցով էթնիկ գոտու և մարդկության դեմ ուղղված հանցագործությունն է՝ բռնի տեղափոխում և տեղահանություն:
 - Յայտարարում է, որ խաղաղ բնակչության ռմբակոծումը միջազգային մարդասիրական իրավունքի խախտում է:
 - Յայտարարում է, որ հայ ռազմագերիների և խաղաղ բնակիչների խոշտանգումը և սպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի խախտում է:
 - Կոչ է անում Ադրբեջանին ազատելու հայ ռազմագերիներին:
 - Կոչ է անում Ադրբեջանին կատարելու Արդարադատության միջազգային դատարանի որոշումները:

- Կոչ է անում Ադրբեջանի կառավարությանը կանխելու հայերի իրավունքների հետագա խախտումները:
- Կոչ է անում Ադրբեջանի կառավարությանը կանխելու հայերի՝ իրենց հայրենիքից հետագա տեղահանությունները և հարգելու Յայաստանի Յանապետության տարածքային ամբողջականությունը:
- Կոչ է անում պաշտպանելու հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում:
- Կոչ է անում միջազգային հանրությանը պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը:
- Կոչ է անում միջազգային հանրությանը երաշխավորելու հայերի վերադարձը Լեռնային Ղարաբաղ:
- Կոչ է անում ճանաչելու Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ գործած հանցագործությունները:
- Խորհուրդ է տալիս անցումային արդարադատության միջոցներ կիրառել, այդ թվում՝ պատժամիջոցներ, Միջազգային քրեական դատարանի կողմից գործի քննություն:
- Կոչ է անում միջազգային քրեական դատարանի դատախազին հետաքննելու հանցագործությունները:
- Կոչ է անում Ադրբեջանին գործերը դուրս բերելու Յայաստանի Յանապետությունից և հարգելու Լեռնային Ղարաբաղի հայերի ինքնորոշման իրավունքը:

Բանաձևն ընդունվել է 2024 թվականի սեպտեմբերի 2-ին: //

Կանոնակարգ

Սկիզբը՝ էջ 1

- և իրավաբանորեն հիմնավորված այլ փաստաթղթերը:
- Յանձնաժողովները համաձայնեցված կազմակերպում և վերահսկում են տիեզերալուսանկարահանման և օդալուսանկարահանման, գեոդեզիական, կադաստրային և քարտեզագրական աշխատանքների իրականացումը, տեղանքում սահմանագծի անցման հատվածների տեղազննման եւ հետազոտման աշխատանքների կատարումը, ինչպես նաև սահմանագատման իրականացման հետ կապված այլ աշխատանքների կատարումը (այսուհետ՝ սահմանագատման աշխատանքներ):
 - Սահմանագատման աշխատանքների կատարման ընթացքում Յանձնաժողովների միջև ազգային օրենսդրություններով սահմանված կարգով իրականացվում է համապատասխան տիեզերալուսանկարահանման օդալուսանկարահանման, քարտեզագրական եւ գեոդեզիական նյութերի փոխանակում՝ սույն Կանոնակարգի 5-րդ հոդվածով սահմանված պետական սահման սահմանագատման քարտեզի (այսուհետ՝ սահմանագատման քարտեզ) ստեղծման նպատակով:
 - Յանձնաժողովները մշակում, համաձայնեցնում և ընդունում են հետևյալ փաստաթղթերը՝
 - սահմանագատման փորձագիտական խմբերի աշխատանքի կարգի մասին ուղեցույցը,
 - սահմանագատման քարտեզի ստեղծման մասին ուղեցույցը,
 - սահմանագատման քարտեզի վրա հայկական աշխարհագրական անվանումներն ադրբեջաներենով և ադրբեջանական աշխարհագրական անվանումները հայերենով արտացոլելու կարգի մասին ուղեցույցը,
 - պետական սահմանագծի անցման արձանագրություն-նկարագրություն կազմելու կարգի մասին ուղեցույցը,
 - սահմանագատման փաստաթղթերի ձևաչափերի մասին և իրատարական կարգի մասին ուղեցույցը:

- Սույն հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթերի ճշգրիտ անվանումները կհամաձայնեցվեն Յանձնաժողովների աշխատանքի ընթացքում:
 - Անհրաժեշտության դեպքում՝ Յանձնաժողովների համաձայնությամբ, ի լրումն նշված փաստաթղթերի, կազմվում են այլ ուղեցույցներ և կանոններ:
- ՅՈՒՐԱԾ 3**
- Սահմանագատման ընթացքում Յանձնաժողովները՝
 - ձևավորում են սահմանագատման փորձագիտական խմբեր, որոնք տեղանքում իրականացնում են սահմանագատման համալիր միջոցառումներ, և աշխատանքների արդյունքներում կազմվում են փաստաթղթեր՝ Յանձնաժողովներին ներկայացնելու համար,
 - իրականացնում են սահմանագատման փորձագիտական խմբերի գործունեության ղեկավարումն ու վերահսկողությունը,
 - ուսումնասիրում, ստուգում եւ ընդունում են սահմանագատման փորձագիտական խմբերի կողմից ներկայացրած փաստաթղթերը,
 - իրենց իրավասությունների շրջանակներում իրականացնում են սույն Կանոնակարգի պատշաճ կատարումն ապահովելու համար անհրաժեշտ այլ լիազորություններ:
 - Սահմանագատման աշխատանքներն իրականացվում են պարիտետային հիմունքներով: Ընդ որում՝ յուրաքանչյուր Յանձնաժողով ծախսերը հոգում է ինքնուրույն: Յատուկ դեպքերում ծախսերի հարցը ենթակա է առանձին համաձայնեցման:
- ՅՈՒՐԱԾ 4**
- Սահմանագատման աշխատանքներն իրականացնելիս Յանձնաժողովները կարող են դիտարկել սահմանագծի անցման օպտիմալացման հնարավորություններ և համաձայնեցնել գործընթացի չափանիշներն ու ձևերը հետևյալ նպատակներով՝
- սահմանամերձ բնակավայրերի անվտանգ

- գոյության ապահովում,
 - սահմանամերձ տարածքների բնակիչների համար իրենց ավանդական տնտեսական գործունեության համար պայմանների ստեղծում,
 - ինժեներական, էներգետիկ, տրանսպորտային, մեխորոպցիոն և այլ ենթակառուցվածքների անդրսահմանային օբյեկտների, արգելոցների, ազգային պարկերի գործունեության ապահովում, էկոլոգիական և բնապահպանական գործունեության պահպանում, ինչպես նաև ջրային ռեսուրսների օգտագործում,
 - պաշտամուկային նշանակության օբյեկտների, գերեզմանատների, մշակութային և պատմական ժառանգության պահպանություն,
 - ոլորապտույտ գծերի ուղղում,
 - սահմանագծի անցում բնական աշխարհագրական օբյեկտներով և ռելիեֆի տարրերով:
- ՅՈՒՐԱԾ 5**
- Սահմանագատման աշխատանքները Յանձնաժողովներն իրականացնում են սահմանագծի առանձին համաձայնեցված հատվածներով/հատվածամասերով: Յուրաքանչյուր այդպիսի հատվածի/հատվածամասի համար կազմվում է սահմանագծի անցման նկարագրություն, որը մինչև սահմանագատման գործընթացի ամբողջական ավարտը կհամարվի համաձայնեցված:
 - Սահմանագատման համալիր աշխատանքների կատարման արդյունքներով Յանձնաժողովները կազմում են ամբողջ պետական սահմանագծի անցման Արձանագրություն-նկարագրությունը և դրան կից հետևյալ փաստաթղթերը՝
 - 1:25000 մասշտաբի սահմանագատման քարտեզը (փոխադարձ համաձայնության սահմանագծի որոշ հատվածների համար՝ հնարավոր է 1:10000 մասշտաբի և ավելի խոշոր մասշտաբի սահմանագատման քարտեզի ստեղծումը),
 - համաձայնեցված սահմանագատման քարտեզի վրա արտացոլված սահմանագծի համապատասխան կազմված՝ հայ-ադրբեջանական պետական սահմանագծի անցման անալիտիկ կողորհնատների կատարողը:


- Յանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ եզրափակիչ արձանագրությունը:
 - Պետական սահմանագծի անցման Արձանագրություն-նկարագրությունը, ինչպես նաև դրա հավելվածները կազմվում են հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն ու ստորագրվում Յանձնաժողովների նախագահների կողմից:
 - Պետական սահմանագծի անցման Արձանագրություն-նկարագրությունը և դրա հավելվածները՝ հանդիսանալով Յայաստանի Յանապետության և Ադրբեջանի Յանապետության միջև պետական սահմանագծի պայմանագրի բաղկացուցիչ մասը, ուժի մեջ են մտնում այդպիսի պայմանագրի ստորագրումից և դրա անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անցնելուց հետո:
 - Անհրաժեշտության դեպքում, ի լրումն սույն հոդվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերի, կարող են ավելացվել նաև սահմանագատման համալիր աշխատանքների կատարման ընթացքում պատրաստված այլ նյութեր:
- ՅՈՒՐԱԾ 6**
- Փոխադարձ համաձայնությամբ սույն Կանոնակարգում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Կանոնակարգի անբաժանելի մասը կազմող արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Կանոնակարգի 7-րդ հոդվածին համապատասխան:
- ՅՈՒՐԱԾ 7**
- Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Յայաստանի Յանապետության և Ադրբեջանի Յանապետության կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրը և գործում է մինչև սահմանագատման աշխատանքների ամբողջական ավարտը:
- Ստորագրված է 30.08.2024 թվականի, երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը՝ հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Կանոնակարգի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում կիրառվում է ռուսերենով կազմված տեքստը:

ՅԱՆԱՍՏԱՆԻ ՅԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԲԵՋԱՆԻ ՅԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ՍԱՀՄԱՆԱԳԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳՈՒՄԻ ՆԵՐԿԱԿԱՐԳՈՒՄԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

[Handwritten signature]

ԱՐԴԲԵՋԱՆԻ ՅԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՅԱՆԱՍՏԱՆԻ ՅԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾԻ ՍԱՀՄԱՆԱԳԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳՈՒՄԻ ՆԵՐԿԱԿԱՐԳՈՒՄԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

[Handwritten signature]



Սյունիքը Գուրոսի լուսանկարներում. Նկարիչների միությունում կայացավ բացառիկ լուսանկարներ պարունակող գրքի շնորհանդես

Յայատանի նկարիչների միությունում տեղի ունեցավ «Պատկեր և պատում. XX դարի Սյունիքը Գուրոսի լուսանկարներում» գրքի շնորհանդեսը և «Գուրոս. Սյունիքը վավերագրողը» ցուցահանդեսի բացումը, որտեղ ներկայացվեցին «Պատմամշակութային արժեք-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդերում պահվող արվեստագետ Գուրոսի՝ Գուրգեն Պարոնյանի սևանկարների հավաքածուից ավելի քան 180 լուսանկար: Լուսանկարների մի մասը երբևէ չհրատարակված բացառիկ պատկերներ է, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում Սյունիքի բնության և հուշարձանների, բնակավայրերի ու բնակչության մասին: «Արմենպրես»-ի հարցրդմամբ՝ Նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանն իր խոսքում նշեց, որ ցուցահանդեսն ինքնին հետաքրքիր է այն առումով, որ ներկայացնում է մի ամբողջ դարաշրջան:

«Երբ մարդն ապրում է, շատ հաճախ շրջապատն իրեն թվում է սովորական, բայց կան նրանք, ովքեր այդ ամենը դիտել են բոլորովին այլ տեսանկյունից և այդ

պրոֆեսիոնալների շարքին է դասվում Գուրոսը, ով կարողացել է իր ժամանակաշրջանը ֆիքսել, տեսնել մի ուրիշ դիտակետից և սերունդներին փոխանցել այն մեծ հարստությունը, որն այսօր դիտելու հնարավորություն ունեն մեր հայրենակիցները»,- ասաց Նկարիչների միության նախագահը:

ԿԳՄՍ փոխնախարար Ալֆրեդ Քոչարյանն իր հերթին նշեց, որ բացառիկ լուսանկարների ցուցադրությունն ունի երեք արժեքավոր տարր:

«Առաջինը միանշանակ Գուրոսի թողած ժառանգությունն է, որով են և շատերը նորովին են բացահայտել Սյունիքը: Մենք ծանոթ ենք մեր ճարտարապետությանը, գիտենք, թե ինչպիսին են մեր յուրօրինակ շենքերը, բայց լուսանկարներում դրանք տեսնելիս ևս մեկ անգամ ստանում ենք հնարավորություն՝ համոզվելու մեր պատկերացումներում: Երկրորդ կարևոր տարրը պարոն Երանոսյանի կատարած որակյալ աշխատանքն է, որը խոսում է այն մասին, որ այսօր մեր ՊՈԱԿ-ներում աշխատում են պրոֆեսիոնալ գիտաշխա-

տողներ: Իսկ երրորդ կարևոր տարրը մեր գրքերի և կոնկրետ այս պարագայում ներկայացվելիք գրքի որակն է: Շատ անգամ եղել են դեպքեր, երբ բովանդակությամբ հարուստ աշխատանքները ներկայացվել են համալսարանական պատճենի մակարդակով, ինչն անընդունելի է, մինչդեռ այս աշխատանքը, որը կատարվել է ՊՈԱԿ-ի կողմից, իրականում շատ բարձր որակի է և կարող է իր պատվավոր տեղը գտնել մեր հուշանվերների խանութում»,- ասաց Քոչարյանը:

«Պատկեր և պատում. XX դարի Սյունիքը Գուրոսի լուսանկարներում» գրքի հեղինակ Արգամ Երանոսյանն էլ նշեց, որ տվյալ աշխատանքը մի մարդու մասին է, ով կյանքի ընթացքում իր ամբողջ գործունեությունը նվիրել է Սյունիքի, մասնավորապես Գորիսի շրջանի պատմամշակութային ժառանգության վավերագրմանը և իր արժանի տեղն ունի այնպիսի անվանի լուսանկարիչների շարքում, ինչպիսիք են Արամ Կրույրը, Արա Գյուլերը, Սեբաստիա Սալգարդոն և շատ ուրիշները:

«Այն առարկաներն ու իրերը, որոնք պահվում են մեր թանգարաններում, մեր

հավաքածուներում, պետք է պարբերաբար առանձին ժողովածուների տեսքով դրվեն շրջանառության մեջ, հրատարակվեն և հանրության համար դառնան հասանելի: Գուրոսի աշխատանքները ոչ միայն գեղարվեստական, մշակութային բարձրարժեք գործեր են, այլև թանգարանային նմուշներ են, որ իրենց արժանի տեղը պետք է գտնեն մեր թանգարանային հավաքածուներում»,- ասաց գրքի հեղինակը:

Երանոսյանը տեղեկացրեց, որ իր աշխատությունը կազմվել է պատմամշակութային արժեք-թանգարաններում առկա 891 սևանկարների հավաքածուի հիման վրա, որոնց մի մասը ապակու հիմքով նկարներ են, մի մասն էլ ժապավեններ են: Նկարների առաջին խումբը Գուրոսը լուսանկարել է 1920-30-ական թվականներին, երկրորդ խումբը՝ 1950-60-ական թվականներին, որոնց համադրումը տալիս է մի ամբողջական վավերագրություն:

«Գուրոսը լուսանկարել է խորհրդային շրջանի արդիականացման փուլը, երբ ավանդական տնտեսաձևից անցում էր կատարվում կոլեկտիվ տնտեսության: Լուսանկարել է նաև մարդկանց ապրելակերպն ու կացութաձևը, երբ բարանձավներից մարդկանց կենցաղը տեղափոխվեց սարահարթ: Մանրամասնորեն վավերագրել է, թե ինչպես է զարգացել հին Գորիսը, ինչպես է ձևավորվել ժամանակակից բնակատեղին: Մի խումբ նկարներում էլ պատկերված են 1931 թվականի երկրաշարժի հետևանքները: Արիսիքը պատկերում լուսանկարները պահպանվել էին միայն Գուրոսի մոտ: Նա վավերագրել է նաև բնական աղետի պատճառով հուշարձանների շրջանում եղած ավերածությունները: Նա մանրամասնորեն լուսանկարել է Սյունիքի գեղատեսիլ բնությունը, հատկապես ժայռերը, որոնց հետ կապված կան բազմաթիվ առասպելներ ու պատումներ»,- ասաց արվեստագետը:

31.08.2024

Հարցազրույց «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական ղեկարտամենտի ղեկավար Չարա Սիանոզովայի հետ

Սկզբը՝ էջ 1

յ՞՞՞ Ուսումնական կենտրոնում ստացած կրթության վերաբերյալ իրավունքի ուժ ունեցող փաստաթուղթ (վկայական) է ստրվում:

– Մեր ընկերությունը նման լիցենզիա չունի: Ուստի և Ուսումնական կենտրոնում ուսուցումը կազմակերպում ենք լիցենզավորված ընկերության միջոցով: Այսինքն՝ այդ կազմակերպությունն է ուսուցումն իրականացնում մեզ հետ համագործակցելով: Այնպես որ՝ Ուսումնական կենտրոնում մասնագիտություն ստացած երիտասարդները կարող են աշխատել ոչ միայն կոմբինատում, այլև ցանկացած ուրիշ կազմակերպությունում, որտեղ կա տվյալ որակավորման մասնագետների պահանջ:

– **Կադրերի ատեստավորման մասին խոսենք... Երբ ներկայիս սեփականատերը ստանձնեց ընկերության տնօրինումը՝ առաջին քայլերից մեկն աշխատակիցների ատեստավորումն էր: Եվ դա դրական արձագանք ունեցավ, բանի որ այդպես էր կարողացվում, հստակեցվում:**

– Կադրերի ատեստավորումը նորություն

չէր: Ուղղակի նախկինում դա արվում էր կարգ բարձրացնելու, իսկ դրա արդյունքում աշխատավարձ բարձրացնելու համար: Զիմա չափազանց լուրջ ենք մոտենում այդ հարցին:

Նախ՝ ատեստացիա անցնում են բոլորը: Դրան նախորդում են նախապատրաստական ծավալուն աշխատանքներ, մեր իսկ աշխատակիցների ներգրավվածությամբ պատրաստվում են հարցաշարեր, որոնք կազմված են լինում շատ հարցերից և այնպես, որ սուբյեկտիվ մոտեցումը բացառվի:

Ունենք գնահատման հստակ կարգ, և ապահովում ենք գնահատող հանձնաժողովի աշխատանքի թափանցիկությունը, որպեսզի որևէ կամայական մոտեցում տեղ չգտնի, ու ապահովի օբյեկտիվությունը:

Ի վերջո հարցերը տրվում են, գրավոր պատասխանները ստանում ենք... Ասել է՝ քննական լուրջ գործընթաց է տեղի ունենում: Ատեստավորումը հիմա ոչ թե նրա համար է, որ աշխատողների կարգը կամ աշխատավարձը բարձրացվի, այլ նրա համար, որ ստուգվեն աշխատողների գիտելիքներն ու տվյալ պաշտոնին համապատասխանությունը:

Ատեստավորումից հետո կարող է և աշ-

խատողի կարգն իջեցվի, հնարավոր է նաև, որ ատեստավորման արդյունքում տվյալ մարդու հետագա աշխատանքը նպատակահարմար չգտնվի: Ատեստավորման արդյունքն ուժի մեջ է մեկ տարի, որոշ դեպքերում ժամկետը կախված է մասնագիտությունից:

Աշխատակիցները պետք է ունենան հավասար հնարավորություն՝ աճելու, սովորելու, առաջադիմելու համար: Իսկ ատեստավորումը նման հնարավորություն ընձեռում է յուրաքանչյուրին:

– **Նորություն ասած չենք լինի, եթե հիշեցնենք՝ ԶՊՄԿ-ում աշխատելը գրավիչ է ու ցանկալի շատերի համար: Ինչպե՞ս կարելի է աշխատանքի ընդունվել կոմբինատում:**

– Մի նրբություն կա՝ աշխատել, թե՛ գումար վաստակել-ստանալ: Դրանք տարբեր իրավիճակներ են:

Ընկերությունում աշխատանքի ընդունվելու մեխանիզմը ներկայումս շատ թափանցիկ է: Մենք հիմա ունենք տվյալ հարցով զբաղվող ստորաբաժանում, որ կոմբինատի տարածքից դուրս է տեղակայված, որպեսզի մարդիկ անցագիր ստանալու և կոմբինատ մտնելու ինտիմ չլինեն:

Այնտեղ կարող են տեղեկանալ թափուր աշխատատեղերի մասին, լրացնել դիմում, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր:

Ընդունելության հարցում մեզ համար առաջնային են Քաջարանի, Կապանի, ինչպես և ազդակիր մյուս համայնքների բնակիչները:

Մի պահ ընդունելությունը խիստ սահմանափակված էր, որովհետև անհրաժեշտ անձնակազմից ավելի աշխատող ունեցիք:

Իսկ երբ ընդունելությունը հնարավորություն է լինում... Եթե գուտ մասնագիտական թափուր հաստիք է, ապա հավակնորդը պետք է ունենա մասնագիտական կրթություն, հմտություն: Կարծում եմ՝ ճիշտ կհասկանաք մեզ՝ մենք չենք կարող մարդուն ընդունել և գրոյից մասնագիտություն սովորեցնել:

Ոչ մասնագիտական թափուր հաստիքները բավականին քիչ են, նաև համեմատաբար քիչ են վարձատրվում, երբեմն էլ ավելի ծանր աշխատանք են կատարում: Ու հաճախ մարդիկ չեն ուզում ստանձնել նման աշխատանք, չեն ուզում հերթափոխով աշխատել:

Մի հանգամանք է ևս. նախապատվություն ենք տալիս այն մարդկանց, ովքեր ընտանիքում աշխատող չլինեն: Այդ պարագայում շատ կարևոր է, թե ինչ կարող են անել տվյալ անձինք և ինչ թափուր հաստիք ունենք տվյալ պահին:

– **Եվ ի՞նչ մասնագիտությամբ աշխատողների կարիք ունեք այս պահին:**

– Ցանկացած ոլորտում միշտ էլ լավ աշխատողի կարիք կա... Իսկ այս պա-

Գարեգին 2-րդ. «Արցախն անցյալ չէ, այն պատմական հայրենիք է»

Լ.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսն ուղերձ է հղել Արցախի հանրապետության անկախության օրվա առիթով.



իղծերի ու տեսիլքների իրակա-նացմանը:

Արցախի Անկախության օրվա հիշատակումը ևս մեկ պատգամ է մեր ժողովրդին և մարդասիրության բարձր արժեքների շատագույն միջազգային հանրությանը՝ գործուն ջանքեր ներդնելու հանուն արդարության ու ճշմարտության հաղթանակի, հանուն արցախահայության ունևորված իրավունքների պաշտպանության և Արցախի հայկական բազմադարյա հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության:

«Սեպտեմբերի 2-ը Արցախի անկախության օրն է: Արցախի բռնազավթման և ամբողջական հայաթափման պայմաններում մենք շարունակում ենք նշել պատմական այս օրը, քանզի Արցախն անցյալ չէ, այն պատմական հայրենիք է, ուր արցախահայությունը հազարամյակներով ապրել ու արարել է, արյամբ ու քրտինքով պաշտպանել իր ինքնությունը, հայրերի ավանդներն ու սրբազան արժեքները, փայլալույս լուսավոր գալիքի իր սկիզբնական երազները:

Մենք շարունակում ենք նշել Արցախի անկախության օրը նաև որպես արդար ընդունված ընդդեմ մեր ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանության, բռնության ու աստվածասպանության: Բռնությունը չի կարող ջնջել մարդկային հիշողությունը և չի կարող խլացնել արդարության ձայնը: Մենք հավատում ենք, որ պատմական մեր հիշատակները և մեր նախնայաց սիրանքները զորացնելու են մեզ և մեր ժողովուրդը հավատով ու հույսով հաղթահարելու է պատերազմի աղետալի հետևանքները, հայրենասեր ու ազգանվեր ոգով հետամուտ է լինելու իր համազգային

նվիրակյալ այս օրը մեր սրտաբուխ աղոթքը բարձրացնելն առ Աստված հանուն Արցախի ազատագրության ու պաշտպանության իրենց կյանքն ընծայած բոլոր բաջորդիների, ինչպես և Տիրոջ օգնականությունը հայցելն Արցախի պատանդառված ռազմաբաղաչական ղեկավարների և գերեվարված մեր բոլոր զավակների շուտափույթ ազատ արձակման համար:

Թող Երկնավոր Տերը միշտ առկայծ պահի մեր ժողովրդի զավակների հոգիներում սերն ու հավատարմությունը հանդեպ հայրենի երկրի, խաղաղություն ու միախորհրդուն սփռի հայրենական մեր կյանքում և դեպի լուսավոր ու հաղթական հանգրվաններ առաջնորդի համայն ազգիս: Ամեն»:

02.09.2024

ԱՐԱՄ Ա. «Արցախն անցյալ չէ, Արցախի հայկական պատկանելության ամբողջական վերականգնումը պետք է դառնա ամենօրյա պայքար»

Արցախը անցյալ չէ, Արցախի հայկական պատկանելության ամբողջական վերականգնումը պետք է դառնա ամենօրյա պայքար: Այս մասին հայտարարել է Արամ Ա Կաթողիկոսը:



կան պատկանելիության ամբողջական վերականգնումը պետք է դառնա ամենօրյա պայքար, նախ ներքին ճակատի համար: Այս համազգային պայքարի շուրջ պետք է համահմարվեն Հայաստանը, մեր եկեղեցին, մեր ազգային կառույցները, Սփյուռքը: Արցախի հայկական պատկանելիության վերականգնման մեր

հանձնառությունը պետք է նաև մեզ մղի հետևողական ու ծրագրված աշխատանքի՝ միջազգային համայնքի ներսում: Պետական, բաղադրական, կրոնական, մշակութային ու ակադեմիական շրջանակներում այս փաստացի տվյալները հարկ է շեշտել ու վերաշեշտել Արցախի հայկական պատկանելիությունը: Միաժամանակ անհրաժեշտ է նաև հայոց բանակի հզորացումը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության համար Արցախի հարցը միշտ պիտի մնա առաջնահերթ: Պետական պատասխանատուների, կրոնական ներկայացուցիչների ու դիվանագիտական մարմինների հետ մեր հանդիպումների ժամանակ պիտի շարունակենք կարևորությամբ շեշտել Արցախի հարցի ամբողջական ու արդար լուծում տալու հրամայականը, ինչպես նաև մեր բաղադրական ու պետական բանտարկյալների շուտափույթ ազատ արձակումը:

Յետևաբար, սիրելի Արցախի հայություն, սփյուռք մի դառնացե՛ք, կառչած մնացե՛ք ձեր դատին, հերոսների արյունով թրծված ձեր հողին, սրբերի աղոթքով շաղխված ձեր հոգեմտավոր կառույցներին: Մեր ժողովուրդը ձեզ հետ է՝ աշակից ու զորակից ձեր պայքարին:

Թող Աստված ամուր պահի մեր պահանջատիրական պայքարը, հզոր Հայաստանի Հանրապետությունը եւ միակամ՝ մեր ժողովուրդը», – նշվում է հաղորդագրության մեջ:

03.09.2024

Բեխի Սուրբ Գևորգ եկեղեցին նորովի է ներկայանում հավատավոր մարդկանց



Բեխի Սուրբ Գևորգ միանավ բազիլիկ եկեղեցին կառուցվել է 17-րդ դարում, վերանորոգվել 1903 թվականին, ինչպես տեղեկացնում է եկեղեցու որմնաքարերից մեկը: 2011 թվականին արժանիկցի մոսկվաբնակ բարերար Միշա Մարգարյանի հովանավորությամբ տանիքապատվել էր եկեղեցին, ներսում կատարվել էին բարեկարգման աշխատանքներ: Այս անգամ էլ ամերիկաբնակ բարերարներ, ամուսիններ Վահե Արսլանյանի և Հասմիկ Փարսադանյանի հովանավորությամբ եկեղեցու բեմը վերջնական տեսք է ստացել:

Օգոստոսի 24-ին մարդաշատ էր եկեղեցու բակը: Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ, հոգեշնորհ Մակար տեր վարդապետ Հակոբյանի օրհնությամբ Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու և Վահանավանքի հոգևոր հովիվներ տեր Խաչատուր քահանա Հայրապետյանի և տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանի ձեռամբ կատարվեց շինարարության ավարտը խորհրդանշող անդաստանի կարգ: Հաջորդ քայլը, ինչպես տեղեկացրին հոգևոր հայրերը, կլինի սուրբ սեղանի օրհ-

նությունը և օծումը: Եկեղեցական արարողակարգից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մատաղի օրհնության կարգ և հյուրասիրություն: Երախտագիտություն հայտնվեց բարերարներին, որոնց շնորհիվ եկեղեցին նորովի է ներկայանում հավատավոր մարդկանց:

Համագյուղացի Աշոտ Փարսադանյանը հակիրճ ներկայացրեց սուրբ Գևորգ եկեղեցու պատմությունը: Խորհրդային աստվածամերժության տարիներին հավատի այդ տաճարը վերածվել էր պահեստի, ծառայում էր այլևայլ նպատակների: Որոշ ժամանակ անտերության էր մատնվել, անձրևաջրերը թափանցում էին ներս, ավերածություններ գործում:

Բանախոսը հավատի այդ տաճարի բարեկարգմանը նպաստած բարերարներին և շինարարներին, քանդակագործ Ռազմիկ Հայրապետյանին բարեմաղթանքներ հղեց, նաև ներկաներին հիշեցրեց թումանյանական պատգամը՝

Գործն է անմահ, լավ իմացե՛ք, Որ խոսվում է դարեդար...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՌՎՈՒՄ Ե ՄՈՅՈՒՅԹ «ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՈՐԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԶՈՒՅՑ» ՊՈԱԿ-Ի

- «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի դասախոս (27 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ),
- «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության, մասնագիտական առարկաների դասախոս (18 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ),
- «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ (1,5 դրույթ),
- «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության, մասնագիտական առարկաների դասախոս (18 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ),
- «Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր» մասնագիտության, մասնագիտական առարկաների դասախոս (26 ժամ շաբաթական ծանրաբեռնվածությամբ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՄ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի

26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների բաղաբացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի բաղաբացիները՝ նաև գինորդական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակցից կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համարել դրանք: Փաստաթղթերի ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից - 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 19-ին՝ ժամը՝ 14 -00-ին, Սյունիքի տարածաշրջանային պետական բուհում, հասցեն՝ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գրիգոր Արզումանյան 11ա: Տեղեկությունների համար զանգահարել (0285) 5 30 61, (077) 38 48 72 հեռախոսահամարներով:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԲԱԿ ԴԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԳՍԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ» – ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թեմայի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բազարտուկյաց փող., 70ա նեթք

Ճավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 11.09.2024թ.: